## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/4-7

ք.Երևան

«09» հունիսի 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Ազատյանի, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 05.02.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/4-7 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով մատակարար կազմակերպության 08.06.2020թ. թիվ 69/020 գրությունը, կողմերը որոշեցին Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով նախատեսված 2-րդ եռամսյակի ընթացքում մատակարարման ենթակա ապրանքատեսակներից՝ «շապիկ, գործվածք» ապրանքատեսակի ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ սահմանել մինչև 31.07.2020թ.:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/4-7 ծածկագրով պայմանագրի անքաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ |
| Ք. Երևան, Արշակունյաց-63 | ք. Երևան, Զ. Սարկավագի 157 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 1510023294810100 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00803554 |
| ՔԿ ծառայություն՝ | «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի |
| Ա. Ղազարյան | տնօրեն՝ Ա. Ազատյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |